ՏԵՂԵԿԱԳԻՐ ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՌ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱՅԻ
ИЗВЕСТИЯ АКАДЕМИИ НАУК АРМЯНСКОЙ ССР

Հասարակական գիտություններ 1948, № 7 *Общественные науки*

Ն. Սարգսյան

ՕՍՄԱՆՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱԳՐԱՐԱՅԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԹՈՒՐՔԱՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ XIX ԴԱՐԻ ԵՐԿՐՈՐԴ ԿԵՍԻՆ

Օսմանյան կառավարության ագրարային քաղաքականությունը Թուրքահայաստանում, ինչպես նաև Թուրքերի՝ քաղաքական և տնտեսական ճնշման բոլոր ձևերի կիրառումը հայերի վերաբերյալ, ունեցել են մի հիմնական նպատակ՝ Հայաստանը մաքրել հայերից: Ահա թե ինչ է ասել 70-ական թվականների երիտասարդ Թուրքերի պարագլուխներից մեկը՝ Բեժալ փաշան։

«Հիմա, այսօր Անգլիո շահերը կպահանջեն, որ Փոքր Ասիո (մենք և Անգլիա Հայաստան բառը ոչ միայն չենք ճանչեր, այլ այդ անունը հնչող կզակները պետք է ջախջախենք) մեր ունեցած երկիրները ազատ մնան օտարին միջամտութենեն և միջամտության ամեն առիթներեն. ուստի այդ սուրբ նպատակին համար պետք է և պետական իրավունք կպահանջե, որ որևիցե կասկածելի տարբ անհետ ընենք, որպեսզի ապագան ապահովենք, ուրեմն այդ հայ ազգը վերցնելու, անհետ և անճետ ընելու ենք։ Եվ այդ ի գլուխ հանելու համար բան չի պակսիր մեզ. ամեն գործիք պատրաստ ունինք քուրդ, չերկեզ, կուսակալ, գատավոր, հարկահան, ոստիկան, վերջապես ամենայն ինչ. կրոնական պատերազմ կհրատարակենք, և գյուրին պատերազմ այնպիսի ազգի մը դեմ՝ որ ոչ զենք ունի, ոչ զինվորություն և ոչ պաշտպան. երբ ընդհակառակն, մենք զենք էլ ունինք, զինվորություն էլ և աշխարհիս ամենամեծ տերության մեկը՝ և ամենեն հարուստը մեզ նիզակից է և մեր Ասիական աշխարհքին երաշխավոր։ Եվ եթե այդ հայ ազգը բնաջինջ լինի և քրիստոնյա Եվրոպա կրոնակից մը փնտռէ և չի գտնէ տաճկական Ասիո մեջ, կբթոզու զմեզ հանգիստ և այն աաեն կզրաղինք ներքին գործերով և բարեկարգությամբքս։[1] Բեժալից բերված այս խոսքերը ցույց են տալիս, որ հայերի հաբստահարումը և ջարդը Թուրքիայի հայկական վիլայեթներում չի եղել պատահական երեույթ կամ մուսուլմանական ազգաբնակչության ֆանատիզմի հետեանք, այլ եղել է կազմակերպված և մտածված ծրագիր։

Այս առթիվ անգլիական քահանա Մակկոլն իր „Ответственность Англии перед Арменией“ *աշխատության մեջ գրում է. «Քրիստոնյաների ջարդը Օսմանյան կայսրությունում կատարվում է պարբերաբար, ոչ որպես տեղական ֆանատիզմի պայթությունների հետևանք, այլ որպես քաղաքական ակտ, կապված որոշ սիստեմի հետ և կատարվում է մշտապես սուլթանի և նրա խորհրդատուների հրամանով կամ ներշնչմամբ։»*

[1] *«Փորձ», 1879 թ. VI—VIII, էջ 204—205։*

[2] *Կան. Մեյնկոլմ Մակկոլ*—„Ответственность Англии перед Арменией“ (см. сборник—„Положение армян в Турции до вмешательства держав 1895 г.“, изд. 1896 г. стр. 173).

Մի ուրիշ հեղինակ, ֆրանսիական հայտնի դիվանագետ Ժյուլ Կամբոնը, խոսելով հայերի 1891—1896 թվականների ջարդերի մասին, գրել է հետևյալը. «...Միասին չեն գործում արդյոք մարդասպանները և կառավարությունը, և արդյոք վերևում (սուլթանի արքունիքում—Ն. Մ.) չի՞ մտածված ոչնչացնել ամբողջ հայ ազգը։ Դիարբեքիրում, Սիվազում, Տրապիզոնդում և մինչև անգամ Կոստանդինապոլսում տեղի քրիստոնյաներն ապրում էին ընդմիշտ ահի և երկյուղի մեջ։ Քրիստոնյա աղգաբնակչությունը սարսափից խելքը կորցրած փախչում էր...»[1]

Նչից էր բխում Թուրքերի այդպիսի քաղաքականությունը Թուրքահայաստանում և ինչու այդ քաղաքականությունը ավելի ևս ուժեղացավ հատկապես XIX դարի երկրորդ կեսին։

Ինչպես հայտնի է, XIX դարի առաջին կեսին Օսմանյան կայսրության եվրոպական մասում տեղի են ունեցել հույների և սերբերի ազգային-ազատագրական շարժումները, որոնք վերջացան նրանց լիակատար ազատագրումով օսմանյան լծից։ Օսմանյան կառավարությունը, վախենալով հետագա ազգային-ազատագրական շարժումներից, վճռական միջոցներ է ձեռք առնում իր հպատակ քրիստոնյա ժողովուրդների դեմ և առաջին հերթին հայերի, որովհետև հենց ճիշտ XIX դարի երկրորդ կեսից Թուրքահայաստանում ուժեղանում է ազգային ազատագրական շարժումը, որի հիմնական շարժիչ ուժը հանդիսանում էր գյուղացիությունը։ Անհրաժեշտ էր ճնշել այդ ազգային ազատագրական շարժումը, որը միևնույն ժամանակ ուղղված էր նաև ֆեոդալական կարգերի և ֆեոդալական շահագործման դեմ, հետևապես և սուլթանի, որպես ամբողջ այդ սիստեմը գլխավորողի։

Բրա հետ միասին Թուրքական նորածին առևտրա-արդյունաբերական բուրժուազիան ի վիճակի չէր մրցել հայկական և ուրիշ քրիստոնյա ազգերի բուրժուազիայի հետ։ Այդ պատճառով Թուրքական ազգային բուրժուազիան, որն արդեն գրավել էր որոշ դիրք երկրի տնտեսության մեջ, պայքարում էր իր այդ դիրքը և միաժամանակ կայսրության ամբողջությունը պահպանելու և ուժեղացնելու համար։ Իր քաղաքականությունը հայերի նկատմամբ իրագործելու նպատակով, Օսմանյան կառավարությունը հենվում էր քրդական բեկերի վրա։ Պետք է ասել, որ 40—50-ական թվականներին Օսմանյան կառավարությանը հաջողվեց հնազանդեցնել քրդական ցեղերը, օգտագործելով նրանց, Օսմանյան կառավարությունը ամեն կերպ աշխատում էր ոչնչացնել հայերին։

Եվ վերջապես Օսմանյան կառավարության քաղաքականության ճնշման ուժեղացումը հայերի հանդեպ կապված էր XIX դարի երկրորդ կեսին Անգլիայի, Ֆրանսիայի, Գերմանիայի և Ռուսաստանի էքսպանսիայի ուժեղացման հետ։

Եվրոպական պետությունները Թուրքիայի համար ժողված պայքարում նպատակ ունեին ուժեղացնել իրենց քաղաքական դիրքը և ձեռք բերել

[1] *Жюль Камбон*—„Дипломат", перевод с французского, изд. 1946 г., стр. 49 (Ընդգծումը մերն է—Ն. Մ.)։

նոր հնարավորություններ՝ Օսմանյան պետության ներքին քաղաքական կյանքի վրա ազդելու համար։ Այդ պայքարում նրանք օգտագործում էին Թուրքիայում բնակվող ազգային փոքրամասնությունների ազգային-ազատագրական շարժումը, հանդես գալով նրանց «պաշտպանների» դերում. միաժամանակ, դա չէր խանգարում նույն պետություններին՝ գուրս գալ Օսմանյան կայսրության մեջ բնակվող ազգային փոքրամասնությունների դեմ այն ժամանակ, երբ վերջիններս փորձում էին ռևոլուցիոն ճանապարհով ազատվել օսմանյան տիրապետությունից։ Դա բացատրվում է նախ նրանով, որ այդ կապիտալիստական երկրների իշխող դասակարգերը դեմ էին ռևոլուցիային, թեկուզ և այն ուղղված լիներ թուրքական սուլթանի դեմ, երկրորդը՝ ճնշված ժողովուրդների իսկական ազատագրումը Օսմանյան տիրապետությունից եվրոպական պետությունների ձեռքից խլում էր այն ուժեղ դենքը, որի միջոցով նրանք, ելնելով իրենց շահերից, ազդում էին Թուրքիայի քաղաքականության վրա։

Դրանք են հիմնականում այն ներքին և արտաքին պատճառները, որոնցից ելնելով սուլթանական կառավարությունը կիրառում էր Հայաստանը հայերից մաքրելու քաղաքականությունը։ Դա Թուրքերի քաղաքական ծրագիրն էր, որի հիմքում, ինչպես ասացինք վերևում, դրված էր ագրարային քաղաքականությունը։

Ագրարային քաղաքականությունը ուսումնասիրելու ժամանակ անհրաժեշտ է պարզել թե հողերի ի՞նչ կատեգորիաներ են գոյություն ունեցել մեզ հետաքրքրող Թուրքահայաստանում և հողի տիրապետման ինչ իրավունքներ են եղել։

Ինչպես Թուրքահայաստանում, այնպես էլ Օսմանյան պետության մյուս մասերում, 1858 թվի հողային օրենքի հիման վրա գոյություն ունեին չորս կատեգորիայի հողեր.

1. Միրիե — պետական։
2. Արազի—մեվղուֆե-վակուֆ—մուսուլմանական հոգևորականների և մզկիթների հողեր։
3. Մյուլք—մասնավոր սեփականատերերի հողեր։
4. Արազի-մետրուկե—հասարակական օգտագործման հողեր։

Այս չորս տեսակի հողերը գոյություն ունեին վաղ ժամանակից և 1858 թվի հողային օրենքը միայն գրի առավ այն հողային կատեգորիաները։

Հայկական եկեղեցիների հողերը չէին մտնում վակուֆային հողերի կատեգորիայի մեջ։ Հայկական եկեղեցին զրկված էր այն իրավունքներից և արտոնություններից, որոնցից օգտվում էին մուսուլմանական մզկիթները։ Այդ պատճառով Թուրքահայաստանում եկեղեցական հողերը հարկվում էին։ «Վակուֆ,—ասում է Գրիգոր Արծրունին իր դասախոսության մեջ,—համարվում է մզկիթների և առհասարակ եկեղեցիների սեփականություն, բայց երևում է, որ քրիստոնեական եկեղեցիները և վանքերը իրավաբանական անձնավորություններ չեն համարվում, որովհետև, ինչպես տեսնում ենք Կ. Պոլսի Հայոց պատրիարքարանի պաշտոնական տեղեկություններից, հայերն անգագար գանգատվում էին, որ վանքերի և եկեղեցիների կալվածները մահլուլ (անտեր, անվշակ, անժառանգ են—Ե. Ս.) են

հայտնվում և տերությունն առանց այլհայլության նրանց ծախում է և թաֆու[1] է տալիս մասնավոր անձանց»։

Ուստի չի կարելի հայկական եկեղեցիների հողերը նույնացնել վակուֆային հողերի հետ (ինչպես դա անում են մի շարք հեղինակներ), վերջինները լինելով մուսուլմանական մզկիթների լրիվ սեփականություն, աղատված էին պետական և ամեն տեսակի հարկերից, մինչդեռ հայկական եկեղեցիների հողերը չէին համարվում նրանց սեփականությունը, այլ անվանապես պատկանում էին սուլթանական պետությանը և հարկվում էին ինչպես և մյուս մնացած հողերը։ Եվ այն դեպքում, երբ եկեղեցին ի վիճակի չէր լինում հարկը տալ, ինչպես պատահում էր նաև մասնավոր սեփականատիրական հողերի հետ, եկեղեցական հողերը պետությունը վաճառքի էր հանում։ Հայկական եկեղեցիների հողերի վաճառքի և թուրք ու քուրդ բեկերի կողմից բռնի կերպով դրանց դրավման մասին բազմաթիվ վավերագրեր կան «Դիվան հայոց պատմության» ԺԴ գրքի և ֆրանսերեն լեզվով հրատարակված „La situation des Armeniens en Turquie“ ժողովածուի մեջ, որի վերաբերյալ մենք կխոսենք ներքևում, երբ խոսք կլինի եկեղեցական հողերի բռնագրավման մասին։

Հողերի այդ չորս կատեգորիաները օրինազրվել էին օսմանյան հողային օրենսդրություններով, հայերը՝ ըստ թուրքական օրենքի, իբր թե համարվում էին հողատեր, բայց այդ միայն ձևական էր։ Բրողությունը Հայաստանում ցույց էր տալիս բոլորովին հակառակը. 1839 և 1856 թվականների բարենորոգումները՝ այսպես կոչված «Թանզիմաթի ռեֆորմները», որոնք քրիստոնյա ազգաբնակչության, այդ թվում և հայերի, իրավունքները հավասարեցնում էին մուսուլմանների իրավունքների հետ, մնացին միայն թղթի վրա. փաստորեն ամեն տեղ շարունակում էր իշխել կամայականությունը։ Այդ է վկայում Խրիմյանը իր բողոքագրում, ուղղված Կ. Պոլսի հայոց պատրիարքին, որտեղ նա՝ խոսելով Մուշի վիլայեթի մասին, գրում է. «...Չի կա երկիր մի Մշո երկրի պես շահաբեր և արդյունավոր և միանգամայն տերության գանձին ավազան լեցնող առատ աղբյուր մի. բայց չի կա երկիր մի նորա պես թշվառ խեղճ... Թանզիմաթի բարեկարգություն հոն մուտ չէ գործեր, գեղացի ժողովրդոց վիճակ նույն է և ավելի վատթար, ինչպես 20 տարի առաջ ապստամբ պեյերը կիշխեին մեկ-մեկ գավառի վրա տիրապետելով»։ «...Մեր,—այնուհետև շարունակում է Խրիմյանը,—բարեգութ Օդոստափառին գահին ծագած Հաթթի հումայունի հավասարության արևը գեռ այս դժբախտ աշխարհին վրա նշույլ մի անգամ ծագած չէ, ուր ամեն բան խավարին մեջ կը գործվի, տեղական կառավարությունը... ուզե կտեսնա իր աչքի առաջ գործված ոճիրները, չուզե չի տեսնարդ»։[3]

Որ սուլթանի կողմից խոստացված ռեֆորմները մնացին միայն թղթի

---

[1] Թաֆու—նշանակում է կալվածագիր, որը տրվում է պետությանը ծախած հողի դիմաց։ Բայց թաֆույով հող առնողը սեփականատեր չէր դառնում, այլ ստանում է միայն հողի օգտագործման իրավունք։ Թաֆույով տված հողի տերը դարձյալ մնում էր պետությունը։

[2] Գրիգոր Աբեղյան—«Թուրքաց հայերի տնտեսական դրությունը», Թիֆլիս, 1894 թ., էջ 31։

[3] «Դիվան հայոց պատմության», գիրք ԺԴ, էջ 461—463։

վրա, երևում է նաև Probyn-ի „Armenia and Libanon" աշխատությունից։ «Թեև,—գրում է նա,— 1856 թվի հրովարտակը Փարիզի դաշնագրության մեջ էլ մտել էր, այնուամենայնիվ երբեք չի գործադրվել նահանգներում։ Այնուհետև հայերի և թուրքերի հավասարությունը օրենքի առաջ մնաց միայն թղթի վրա։ Թուրքիայի քրիստոնյաներն ընդհանրապես, և հայերը մասնավորապես զուրկ են քաղաքական կյանքի ամենակարևոր տարրից—կյանքի և ստացվածքի ապահովությունից։ Հայերը, բուլղարները և ուրիշ քրիստոնյա հպատակները ներկայացնում են մի անօգնական հոտի պատկերը, անպաշտպան այնպիսի գայլերի հարձակումներից, որպիսիք են քրդերը, չիրքեզները և ուրիշ վայրենի ցեղերը։ Իսկ կառավարությունը, որ պետք է պահպաներ իր հպատակների շահերը, ևանեխ ապազակներին և պաշտպանություն ցույց տալիս և ավարը Ռոցա հետ բաժանում։ (Ընդգծումը մերն է—Ե. Ս.)։ Հայոց այս անմխիթար դրությունը շարունակվում է և ներկայումս, չնայելով, որ շատ տարիներ են անցել այն ժամանակից, երբ հրատարակվեցան զանազան խաթթի-շերիֆներ ու խաթթի-հումայուններ, որոնց մեջ Օսմանյան կայսրության բոլոր հպատակներին անխտիր խոստացվում էր կատարյալ ապահովություն, կրոնական թույլտվություն և հավասարություն օրենքի առաջ...»։[1]

Թանզիմաթի ռեֆորմներից դժգոհ էին մանավանդ քրդական ֆեոդալները, որովհետև նրանք զրկվում էին քրիստոնյաների նկատմամբ ունեցած իրենց նախկին արտոնություններից։

«Տեղեկագիրք գաւառական հարստահարութեանց» ժողովածուի վավերագրերից շատերը ցույց են տալիս, թե ինչպես քրդական բեյերը Թանզիմաթի հետևանքով կորցնելով Հայաստանում ունեցած իրենց նախկին արտոնությունները, նորից վերականգնեցնում են իրենց իրավունքները։ Այդ մասին Վանից հաղորդում են, որ «...քուրդ բեյերը՝ Թանզիմաթի հաստատություններն առաջ իրենց վարած բռնական իշխանությունը վերստին ձեռք առած են, չարչարելով, հարստահարելով զհայերն, որ ըստ առաջնույն տուրք վճարեն իրենց»։[2]

Նման հաղորդումներ կան նաև «Դիվան հայոց պատմության» ԺԳ գրքում։ Այսպես, օրինակ՝ ազգային ժողովին և պատրիարքին հասցեագրված Մուշի զավառի գյուղացիների բողոքագրում ասված է. «...Մեր Մշո դժբախտ երկիր ցարդ ոչ Թանզիմաթի և ոչ ալ Թաշքուլաթի օգուտներ վայելեց և դեռ առաջին բարբարոսության պես զմեզ անխնա կը նեղեն, կը չարչարեն և կը հարստահարեն...»։[3]

Այս բոլորից երևում է, որ Թանզիմաթի ռեֆորմները ոչ միայն հայ գյուղացիությանը չեն բավարարել հողով և չեն հավասարեցրել հայերի իրավունքները մուսուլմանական ժողովրդի իրավունքները, այլ ընդհակառակը հայերի հարստահարումը ավելի ուժեղացել է։ Դա բխում էր այն ներքին և արտաքին պատճառներից, որոնց մասին խոսեցինք այս հոդվածի սկզբում։

---

[1] „Armenia and Libanon", by J. W. Probyn, London, 1877 (տես «Փորձ» ամսագիր, 1877—78, էջ 376)։

[2] «Տեղեկագիրք գաւառական հարստահարութեանց», Կ. Պոլիս, 1876 թ., էջ 25։

[3] «Դիվան հայոց պատմության», գիրք ԺԳ, էջ 143։

Հայերի հարստահարումը դնում էր երկու ուղղությամբ՝ նրանց հողերի մասսայական բռնագրավումով և հարկային սիստեմի ճնշման չտեսնված ուժեղացումով։

Թուրքահայաստանում Օսմանյան կառավարությունը գործադրում էր հայկական հողերի բռնագրավման տարբեր մեթոդներ։

Մենք կանգ կառնենք Թուրքական լծի տակ գտնվող հայերի հողերի բռնագրավման այն մեթոդների վրա, որոնք գործ էին ածվում սիստեմատիկորեն և ամենուրեք։

Ամենատարածված և ընդունված մեթոդը հողերի բացահայտորեն բռնագրավումն էր. այդպիսի բռնագրավումների թիվը անհաշիվ էր։

Կ. Պոլսի պատրիարք Ներսես Վարժապետյանն իր 1876 թ. զեկուցագրի մեջ մեկ առ մեկ թվում է 258 գյուղերից, 22 վանքերից, 2 ավանից և մեկ քաղաքից բռնագրված հողերը։ «Ավելորդ է կրկնել,—գրում է Վարժապետյանը,—որ Ասիո մեջ խել մը պեյեր ու աղաներ, օգուտ քաղելով ժողովրդյան ակարությենեն, տգիտությենեն և հետևաբար տերության կանոնաց անտեղյակ լինելեն, ինչպես և քաջալերվելով պաշտոնեից ոմանց անհոգությենեն, հաջողեր է մեկ մեկ միջոցավ արտերն իրենց վրա թափուրնել տալ։ Իսկ այն պեյերն ու աղաներն, որք տակավին հաջողած չեն մի և նույն նպատակին հասնելու, ամեն նենգություն և բռնություն ի գործ կը դնեն. բռնի սերմ կուտան հողագործին և անոր քրտամբն ու աշխատությամբ գոյացած արքունի տասանորդը վճարվելե ետև կեսն և երբեմն ալ ավելին իրենք կառնուն, կամ ծանր վարձքեր կպահանջեն հողագործեն և բռնաբար կստանան. աղքատ հողագործը կը թշվառանա, հողագործությունը կը հետևի և հայրենյաց ու գանձուն մեծ վնաս կը բերե։

Սույն բազմավնաս վիճակին վերջ դնելու համար հարկ է՝ որ մեր ասիաբնակ հողագործ ազգայիններն իրենց բավական ըլլալու չափով սեպհական հող ունենան, և միանգամայն աղեցության տեր մարդոց միջամտությենեն բոլորովին ազատ մնան, որպեսզի իրենց կացությունը բարվոքի և ապահովի»։

Այնուհետև Ներսես Վարժապետյանը գրում է, որ ինքը հույս ունի թե «այս անգամ Բարձր Դուռը իր խնամակալության տակ կվերցնի խեղճ ժողովրդին, կկազմի խառը հանձնաժողով՝ տեղերում հողային վեճերը քննելու համար»։

Հայտնի է, որ այդպիսին հիմնվեց երեք տարուց հետո 1879 թվին, այն էլ ոչ թե պատրիարք Ներսեսի, այլ եվրոպական պետությունների պահանջով, որովհետև եվրոպական պետությունները պնդում էին, որպեսզի Օսմանյան կառավարությունը կիրառեր Բեռլինի պայմանագրի 61-րդ հոդվածը։

Սուլթանը առերես ցույց էր տալիս, որ միջոցներ է ձեռք առնում Հայաստանում ռեֆորմները «իրականացնելու» համար։ Բայց նա լավ գիտեր, որ մեծ պետություններն առաջ են քաշում ռեֆորմների հարցը այն ժամանակ միայն, երբ իրենց հարկավոր է մի բան պոկել Թուրքիայից։ Այդ պատճառով, երբ իրեն հանգիստ էին թողնում, նա շատ շուտ մոռա-

[1] «Տեղեկագիրք գաւառական հարստահարութեանց», էջ 29—31։

նում էր այդ ռեֆորմները։ Նույնը պատահեց նաև Արդուլ Համիդի կազմակերպած հանձնաժողովի հետ, որը փաստորեն դեռ չէր էլ սկսել աշխատանքը տեղերում, երբ ցրվեց նրա հրամանով։

Հայկական հողերի բռնագրավման վերաբերյալ կան բազմաթիվ վավերագրեր նաև վերև հիշված ֆրանսերեն ժողովածուի մեջ։ Բերենք դրանցից մի քանիսը։

Մուշից հաղորդում են, որ «Շատ տարիներ սրանից առաջ Թուրլ գեղից Հաջի Նազիր աղան (Մուշ). եկել է բնակվելու Դոմ գյուղում (Մուշ) իր հետ ունենալով միայն ձի և հրաձան, տեղի կառավարության պրոտեկցիայի շնորհիվ այդ մարդուն հաջողվեց քշել գյուղի բնակիչներին և նրանց կալվածքներին տեր դառնալ»։[1]

Նույն Մուշի վիլայեթից հաղորդում են հետևյալը «...Բոդլան գյուղի հողերը զավթված են. զավթիչների անունները և խլված հողերի քանակը գրի են առնված»։[2]

Վանի նահանգից ուղարկված մի ուրիշ փաստաթղթում ասված է. «Այն ժամանակ, երբ հայկական գյուղերը ներկայացնում են բռնագրաված հողերի և ունեցվածքների ցուցակները և պահանջում են հետ վերադարձնել, հանցագործները, թալանչիները խմբերով մեկնում են վարչական կենտրոնները և այնտեղերից արդարացած վերադառնում են»։[3]

Վերևում բերված բոլոր փաստերը վերաբերվում են այն հողերին, որոնք հաշվում էին մասնավոր սեփականություն։

Նույն ժողովածուի առանձին բաժնում բերվում են վավերագրեր նաև հայկական եկեղեցիների հողերի բռնագրավումների մասին։ Ահա նրանցից մի քանիսը.

«Երզրումի գավառ։ Սուրբ Գրիգոր Լուսավորչի վանքին պատկանող 5—040 դենյում (1 հեկտար=10,9 դենյումի—Ե. Ս.) վարելահողը քուրդերը խլել են։ Ախուդա գյուղի եկեղեցու 300 դենյում վարելահող զավթել է Ալի-Դեռե քուրդը։ Ետիլերիկ գյուղի սուրբ Թորոս եկեղեցու 300 դենյում վարելահողը խլել է Վուդուվանի Թեմիրը»։[4]

«Վանի նահանգ։ Վարագա վանքի մեծաքանակ հողերը զավթել են Կանե և Սադո քուրդերը։ Մայր Աստվածածնի եկեղեցու 70 դենյում հողը գրավել է Մուսչեսեֆի քուրդը, որն այդ հողերի վրա կառուցել է մի հոյակապ շենք»։[5]

Այս փաստերը կրկին անգամ ապացուցում են վերևում արծարծած մեր այն միտքը, որ թուրքական և քրդական բեկերը և աղաները, տեղերում հենվելով Օսմանյան կառավարության անմիջական աջակցության վրա, բռնի կերպով խլում էին հայկական եկեղեցիների հողերը, այնպես ինչպես մասնավորներինը։

Անկասկած հողերի զավթումը և հայերին հողազուրկ դարձնելը ոչ թե

---

[1] „La situation des Armeniens en Turquie", VI p. 12.
[2] Նույն տեղում, էջ 14։
[3] Նույն տեղում, էջ 35։
[4] Նույն տեղում, մաս IX, էջ 21։
[5] Նույն տեղում, էջ 13։

Օսմանյան կառավարության թուլության հետևանքն էր, այլ Օսմանյան կառավարության ագրարային քաղաքականության։

Հողերի բռնագրավման մեթոդը միակը չէր հայերի հողազրկման գործում։

Օսմանյան կառավարությունը սիստեմատիկորեն անցկացնելով հայկական հողերի էքսպրոպրիացիայի քաղաքականությունը, օգտագործում էր նաև իր դատական օրգանները, որոնց միջոցով նա օրինականացնում էր հողերի գավթումները։

Վերևում մենք ասացինք, որ ինչպես Թանզիմաթի ռեֆորմներում, նույնպես և միջազգային պայմանագրերում, Օսմանյան կառավարությունը բազմիցս խոսք էր տալիս օրենսդրության ասպարեզում քրիստոնյաների իրավունքները հավասարեցնել մուսուլմանների իրավունքների հետ։

Բեռլինի պայմանագրի 63 հոդվածում այդ մասին ասված է հետևյալը. «Բոլորը--անկախ նրանց հավատի, դավանության, իրավունք ունեն դատարանի առաջ վկայություն տալու»։ Թե ինչպես է դա կիրառվել պրակտիկայում, ցույց է տալիս Անգլիայի հյուպատոս Ջերմսայդի տված վկայությունը.—«Տեսականորեն քրիստոնյաներին թույլատրվում է բոլոր դատարաններում լինել վկա։ Բայց գործնականում երբեք ոչ մի մուսուլման քրիստոնյաների վկայության հիման վրա չի ենթարկվում պատժի։ Դատարանում քրիստոնյաների վկայությունը թույլատրվում էր միայն քրիստոնյաների դատական գործերի ժամանակ, բայց քրիստոնյաների և մուսուլմանների միջև տեղի ունեցած դատական գործերում քրիստոնյաների վկայությունը անհանդուրժելի էր»։[1]

«1856 թվի Հաթթը-Հումայունի տված օրենքի հավասարությունը քրիստոնյա ժողովրդի համար գոյություն չունի»,[2] այդպես է գրել 1867 թվին անգլիացի հյուպատոս Սկինը։

Ժամանակակիցների այդ հաղորդումները ցույց են տալիս, որ թուրքական դատարանների միջոցով կառավարությունն օրինականացնում էր բռնի կերպով գրաված հողերը։ Դրանով է բացատրվում այն, որ քրիստոնյաներից դատարանում վկայություն չէին ընդունում։ Ցուրաքանչյուր մուսուլման, առանց որևէ դժվարության, կարող էր, դատարանի միջոցով, օրինականացնել հայերի հողերի գավթումը։ Դրա համար բավական էր սարքել կեղծ փաստաթուղթ, կամ մեկ երկու մուսուլմանների վկայաբերելով հաստատել, որ առաջ այսինչ հայի հողերը պատկանելիս են եղել այսինչ թուրքին։

Այդպիսի դեպքերի մասին բազմաթիվ փաստեր են բերված «Տեղեկագիրք գաւառական հարստահարութեանց» ժողովածուի մեջ։

Բերենք նրանցից մի քանիսը.

«Տիգրանակերտի Սաթը գյուղի բոլոր արտերը Միքթեհա անուն իսլամ կին մը յուրացած է բոլորովին... Շատ տարիներե ի վեր խնդիր եղած է, բայց տեղական կառավարության որոշումը միշտ իսլամ կնոջ

[1] „Положение армян в Турции"..., стр. 296.
[2] Նույն տեղում, էջ 135։

նպաստավոր ըլլալով՝ հայերը դատապարտված են միշտ անոր բաժին հանել իրենց աշխատանաց արդյունքենն։[1]

Այդ ժողովածուի մի ուրիշ փաստաթղթում ասված է. «Մուշ գավառի Մորնինկ գյուղի հայերը 40—50 տարե ի վեր, առանց որևէ անձե բողոք և պահանջում տեղի ունենալուն նույն գյուղի հողերը մշակած ըլլալով, ըստ օրինի սեպհականության իրավունք ստացած են։ Ասկից մեկ քանի տարի առաջ Մշո Մյուֆթի Հյուսեին էֆենտին յուրացնել ուզելով զանոնք՝ ձեռնամուխ կը լինի։ Ժողովուրդը։ կը բողոքե, մյուֆթին յուր պահանջումեն ետ չմնար և կը բռնադատե զգյուղացի հայերն իրենց հողերը թողուլ։ Կարնո կուսակալ Իսմայիլ փաշան երբ Մշո կողմերն այցելության կերթա, անձամբ քննություններ ընելու և ժողովրդյան վիճակը լավ մը հասկանալու, սույն խնդիրն ալ նկատողության կառնու և՝ քննությամբ ստուգելով՝ մյուֆթիին պահանջումն անիրավ և ժողովրդյան նույն գյուղի արտերուն բացարձակ տերն։ ըլլալը կը հաստատե։ Փոքր ինչ անց՝ հետեարար նույն գյուղի հողերը գյուղացի հայոց անվան վրա արձանագրել կուտա...» «Իսմայիլ փաշան՝ Մշո աշխարհին մեջ այս ե ուրիշ բարեկարգություններ ընելե և խել մը քուրդ պեյեր իրենց որջացած տեղերեն վերցնելով աքսորելես վերջը՝ կարին կը դառնա. շատ չանցնիր Կարնո կուսակալության պաշտոնեն կը հանվի։ Հիշյալ Մյուֆթին՝ սույն փոփոխութենեն օգուտ քաղելով յուր նախորդ պահանջումն ու դատը կը նորոգե։ Մորնինգ գյուղեն քանի մը մարդ բերել կուտա ի Մուշ ե, ասոնց խոստումներ ու սպառնալիքներ ընելով, տեղական կառավարության ժողովին մեջ հանուն գյուղացվոց ըսել կուտա անոնց թե՝ նույն գյուղի բոլոր հողերն ու արտերը Մյուֆթի էֆենտիինն են և թե՝ գյուղացիք անոր վարձկաններն են։ Ասոր վրա որոշում կը տրվի որ՝ նույն հողերուն բացարձակ տերը Մշո Մյուֆթի Հյուսեին էֆենտին է, առարկելով՝ թե այսպես վկայված է և թե նախորդ քննությունն ու տնօրինությունը սխալմամբ եղած են։ Գյուղացիք կրկին անպամ են բողոքում, բայց դատարանը որոշում է Մյուֆթի Հյուսեյնի օգտին։»[2]

Այս վավերագիրը ցույց է տալիս, որ նույնիսկ, երբ թուրքական չինովնիկների մեջ գտնվում էին մարդիկ, որոնք ազնվորեն էին վերաբերվում հայերին, Կ. Պոլսի կառավարության կողմից այդպիսիներն անմիջապես հեռացվում էին պաշտոնից, ինչպես այդ արվել է Իսմայիլ փաշայի նկատմամբ։ Նրանց տեղը գնում էին այնպիսի մարդկանց, որոնք հայերի նկատմամբ հետևողականորեն իրագործում էին սուլթանական կառավարության քաղաքականությունը։

Հայկական հողերի էքսպրոպրիացիայի մի ուրիշ ձևն էր հողերի կոնֆիսկացիան պետական տուրքերը ժամանակին չվճարելու դեպքերում, ըստ որում բռնագրված հողերի արժեքը մի քանի հարյուր անգամ ավելի էր այն տուրքերի գումարից, որոնք բնակչությունը պետք է վճարեր կառավարությանը։ Բերենք մի քանի փաստեր.

«Ղորեկ գյուղի (Սիվազի նահանգ) գյուղացի Մ. Թամազյանի երեք

---

[1] «Տեղեկագիրք գաւառական հարստահարութեանց», էջ 10։

[2] Նույն տեղում, էջ 11։

արտերը արժողությամբ՝ 300 լիվր,[1] պետությունը բռնագրավել է 10 լիվր տուրքի դիմաց։

Մի ուրիշ փաստաթղթում ասված է. «Երեմլիվիկ գյուղի (Բուրսայի նահանգ) 200 կտոր արժեքավոր հողերը, արտերը և խոտհարքերը ենթարկվել են բռնագրավման առաջնտվական տուրքի չնչին գումարը չմուծելու պատճառով։

Կոնֆիսկացիայի ենթարկված այս հողերը կառավարությունը թաֆուլի սիստեմով տալիս էր այլ անձանց, գլխավորապես մուսուլմաններին։

Օսմանյան կառավարությունը հայկական հողերի կոնֆիսկացիան կատարում էր նաև պետական երկրագործական բանկի միջոցով, գյուղացիներին նրա տված վարկերը մարելու պատրվակի տակ։ Գյուղացին չորս կողմից խճճված լինելով տուրքերի մեջ, ստիպված էր լինում դիմել երկրագործական բանկին կամ վաշխառուներին։ Հաճախ գյուղացին ի վիճակի չէր լինում վերադարձնել բանկից վերցրած վարկը, կամ նրա տոկոսները, որովհետև սովորաբար տոկոսների գումարը մի քանի անգամ գերազանցում էին վերցրած վարկը։ Գյուղացու պարտքը այնպիսի չափի էր հասնում, որ բոլոր ունեցվածքը վաճառելուց հետո, նա չէր ազատվում պարտքի վճարումից և այդ դեպքում երկրագործական բանկը գրավում էր, ի դիմաց պարտքի, գյուղացու վերջին հողակտորը։

Բանկի գործունեության մասին Պարույր Աթանեսյանը գրում է. «Օսմանյան երկրագործական բանկը, վարկերը ժամանակին չվճարելու դեպքում, վարկատիրոջ հողերը իրավունք ունի վաճառելու պարտքերը գանձելու համար։»[2]

Դրա մասին մեզ արդեն ծանոթ ֆրանսիական ժողովածուի մեջ կարդում ենք. «Ա. Մծեանի (Մարաշ, Հալեպի վիլայեթ) մի հողամասը 150 լիվր արժողությամբ երկրագործական բանկը կոնֆիսկացիայի է ենթարկել 10 լիվր պարտքի դիմաց։»[3]

Այս փաստերը ցույց են տալիս, որ Օսմանյան կառավարարության ձեռքում երկրագործական բանկը փաստորեն հայերին ճնշելու և հողազուրկ դարձնելու գործում հանդիսանում էր լրացուցիչ մի միջոց, չնայած նրան, որ նա իբր թե ստեղծված էր գյուղացիներին օգնելու նպատակով։

Պարտքերը ժամանակին չվճարելու դեպքում, հայերի հողերը բռնագրավում էին նաև վաշխառուները, որոնցից գյուղացիները պետական տուրքեր մուծելու համար հաճախ ստիպված էին լինում պարտք վերցնել 150—200 տոկոսով՝ վերադարձնելու պայմանով։ Դրա հետևանքով գյուղացին կորցնում էր ոչ միայն իր հողը, այլև ինքն ամբողջապես դառնում էր վաշխառուի ժամանակավոր առարկան։

Բացի հայերի վերևում բերված հողազրկման մեթոդներից, գոյություն ուներ մեկ ուրիշը, որը կիրառվում էր հայկական բոլոր վիլայեթ-

[1] Մեկ լիվրը հավասար է 7 ռ. 50 կ.։
[2] „La situation...“ մաս IX, էջ 101։
[3] Նույն տեղում։
[4] Պ. Աթանեսյան – «Հայկական վիլայեթների ներկա տնտեսական վիճակը» («Զիթենի», էջ 318–319)։
[5] „La situation...“ մաս IX, էջ 116։

ներում։ Օսմանյան կառավարությունը հայկական վիլայեթներում տեղավորում էր բռնի կերպով այնտեղ գաղթեցված մուսուլմաններին, իսկ տեղացի հայերին, հողազուրկ անելով, քշում էր երկրի խորքերը, կամ դաղթեցնում ուրիշ երկրներ։ Հայերի հողազրկման այս մեթոդը երևան է հանում Օսմանյան կառավարության բուն նպատակները և ձգտումները՝ հայկական վիլայեթներում հայերին փոխարինել թուրքերով և վերջնականապես խեղդել հայերի ազգային ազատագրական շարժումը, որը 60—80-ական թվականներին դարձել էր համազգային շարժում։ Այդ քաղաքականությունով Թուրքիան ձգտում էր հասնել մի երկրորդ քաղաքական նպատակի՝ ամրացնել արևելյան ճակատը, լուծել հայկական հարցը և վերջ դնել մեծ տերությունների միջամտություններին Թուրքիայի ներքին գործերի մեջ։

Այս հիմնական պատճառներով է բացատրվում մուսուլմանների ներգաղթի ուժեղացումը և նրանց տեղավորումը հայկական վիլայեթներում։

Մեր ձեռքի տակ գտնված փաստաթղթերից երևում է, որ հաճախ ուրիշ երկրներում բնակվող մուսուլմանները չէին կամենում վերադառնալ Թուրքիա։ Թուրքական կառավարությունը նպաստավոր առաջարկներով և հարկ եղած գեպքերում հարկադրաբար նպաստում էր նրանց ներգաղթին։ Այսպիսով ի հաշիվ հայկական բնակչության, ավելանում էր մուսուլմանական բնակչությունը Թուրքահայաստանում։

Բազմաթիվ փաստեր ցույց են տալիս, որ սկսած 1877—1878 թվականների ռուս-Թուրքական պատերազմից, հայկական հողերի մասսայական բռնագրավումը դառնում է ընդհանուր երևույթ։

Այսպիսով, հայերի հողազրկման վերոհիշյալ ձևերը ցույց են տալիս, որ այնպիսի երկրում, ինչպիսին էր Թուրքահայաստանը, որտեղ աղդաբնակության 90 տոկոսը կրաղված էր գյուղատնտեսությամբ, հողերի մասսայական բռնագրավման հետևանքով գյուղացիության զգալի մասը հողազուրկ էր դառնում։ Այս միտքը հիմնավորելու համար բերենք տվյալներ արևմտահայ գյուղաշիր Գեղամ Տեր-Կարապետյանի կազմած աղյուսակից։ Տեր Կարապետյանը եղել է անդամ Կ. Գոլսի պատրիարքարանի կողմից կազմակերպված հանձնաժողովի, որի նպատակն էր որոշել բռնագրավված հայկական հողերի ընդհանուր քանակը։ Այդ հանձնաժողովը 1910—1911 թվականներին 6—7 ամսվա ընթացքում տեղում ուսումնասիրելով փաստաթղթերը, հաստատեց, որ բռնագրավված հողերի ընդհանուր քանակը առանձին-առանձին վիլայեթներում կազմում է.[1]

	Օրավար[2]	Հեկտար
Կարինի վիլայեթում և հարակից գավառներում	100,000	72,000
Խարբերդի վիլայեթում և հար. գավառ.	200,000	144,000
Սեբաստիա (Սիվաս) և հարակ. գավառ	80,000	57,000
Դիարբեքիրի վիլայեթում և հար. գավառ.	200,000	144,000
Վանի » » »	100,000	72,000
Բիթլիս, Մուշ » » »	350,000	252,000
Ընդամենը	1,030,000	741,000

[1] Գեղամ Տեր-Կարապետյան—«Հոգային հարց հայրենակ նահանգների մասին», էջ 43—44։

[2] Գ. Տեր-Կարապետյանը բռնագրավված հողերի քանակը ավել է օրավարով։ Մենք օրավարը վերածել ենք ածել հեկտարի։ 1 օրավարը հավասար է 3/3 դեսյատինի, 1 դեսյատինը 3,093 հեկտարի։

Այս աղյուսակի հիման վրա անհնարին է որոշել բռնագրավված հողերի տոկոսը, որովհետև մեր ձեռքի տակ չկա հայերի մշակած հողերի ընդհանուր քանակը։ Բայց և այնպես աղյուսակում բերված թվերը ցույց են տալիս, որ հայերի հողերի բավականին մեծ տոկոսը եղել է բռնագրավված։ Այդ է ապացուցում նաև Աթանեսյանը իր «Հայկական վիլայեթների ներկա տնտեսական վիճակը» հոդվածում։ «Հողը տաճկահայ գյուղացու ձեռքից դուրս է գնում... Այսպես, օրինակ՝ Խալիթի շրջանում հայերի հողերից գրավել են 92 տոկոս, իսկ Մալաթիայի շրջանում՝ 87 տոկոս և այլն»[1] Նույնը կարելի է ասել նաև Բիթլիսի, Վանի, Դիարբեքիրի և Մուշի վիլայեթների վերաբերյալ, որտեղ բռնագրավված հողերի տոկոսը 70—80-ից ցածր չէր, որովհետև մեզ հասած վավերագրերը ցույց են տալիս, որ ամենաշատ բռնագրավումները եղել են հենց այդ հարավ-արևելյան հայկական վիլայեթներում։ Դա բացատրվում է նրանով, որ այդ վիլայեթներում քուրդերը թվով ավելի շատ էին և թուրքական կառավարությունը հենվելով քրդական բեկերի վրա, հեշտությամբ էր իրագործում իր քաղաքականությունը։ Նման քաղաքականություն այնքան էլ հեշտ չէր հաջողվում կիրառել Հայաստանի հյուսիս-արևմտյան վիլայեթներում, որտեղ ուժեղ չէր քրդական տարրը։

Արևմտահայ հրապարակախոս Բյուզանդ Բեչյանը գրում է. «Ոչ ալ-գելորեն, դարեր շարունակ կատարվում էր Թուրքիայի հայկական գյուղերի քայքայումը, հայերին հողազուրկ անելու միջոցով, հիմք ունենալով բռնությունը, որպես մշտական գործող օրենք, թե այդ հողազրկումը Հայաստանի ազգաբնակչությունը քշել է աշխարհի բոլոր ծայրերը։

Հայերի էմիգրացիան Թուրքիայից, որպես թուրքական լծից ազատվելու մի միջոց, սկսվել է այն ժամանակ, երբ Հայաստանը ընկել է Թուրքիայի տիրապետության տակ։ Բայց էմիգրացիան ավելի լայն ծավալ է ընդունել XIX դարի առաջին և մանավանդ երկրորդ կեսերում, երբ Օսմանյան կառավարությունը սկսել էր իրագործել Հայաստանը հայերից մաքրելու քաղաքականությունը՝ հողազրկության և ֆիզիկական ոչնչացման միջոցով։

Հայերի մասսայական էմիգրացիան ավելի մեծ ծավալ ընդունեց 1877—1878 թվականների ռուս-թուրքական պատերազմի և 1894—1896 թվականների հայերի կոտորածի ժամանակ։

Թուրքական կառավարության մշտական հարստահարությունների պատճառով «Օրդուից շատ հայեր սկսել են գաղթել Պրուսա և ուրիշ տեղերը»[2]

Բացի էմիգրացիայից խոշոր չափեր է ընդունում նաև պանդխտությունը։ Այդ մասին Միքայել Նալբանդյանը «Երկրագործությունը որպես ուղիղ ճանապարհ» աշխատության մեջ գրում է. «Ազգը օրըստօրե թողնում է իր երկիրը և կենարոնանում է քաղաքներում։ Աղքատությունը ստիպում է նրան թողուլ յուր տունը, յուր ընտանիքը, յուր ամուսինը, յուր զավակները և գնալ Պոլիս կամ այլ քաղաք աղքատությունից ազատվելու համար»։[3]

[1] «Զիթենի», ժողովածու, Թիֆլիս, 1915, էջ 318։
[2] Նույն տեղում, էջ 419։
[3] Մ Նալբանդյան—«Երկրագործությունը որպես ուղիղ ճանապարհ», Երևան, 1930 թ., էջ 73։

«Մշո աշխարհ 25 տարեկան մարդ չմնաց, դարիրություն կավրե մեր աշխարհս»[1]

Հայերի էմիգրացիան, աղքատությունը և հողազրկությունը Թուրքահայաստանում սերտորեն կապված էր նաև հարկային քաղաքականության հետ, որը կազմում էր Օսմանյան կառավարության ագրարային քաղաքականության անբաժանելի մասը։

Օսմանյան կառավարությունը XIX դարի երկրորդ կեսում թաղված լինելով պարտքերի մեջ, չափազանց ավելացնում է մինչև այդ գոյություն ունեցող հարկերը և բացի այդ մտցնում է մի շարք նոր հարկեր։

Օսմանյան կայսրությունում, այդ թվում Թուրքահայաստանում գանձվող բոլոր հարկերը բաժանվում էին երկու խմբի։ Առաջին խմբին պատկանում էին այն հարկերը, որոնք գանձվում էին Ղուրանի հիման վրա և կոչվում էին օրինական։ Դրանք էին գլխահարկ կամ ջիզիե, զինվորական հարկ—խարաջ ոչ մուսուլմանների համար և աշար—տասանորդ, որը գանձվում էր կայսրության, ինչպես մուսուլմանական, այնպես և ոչ մուսուլմանական բնակչությունից։

Երկրորդ խմբի մեջ մտնում էին մնացած բոլոր այն հարկերը, որոնք սահմանվում էին պետական իշխանության որոշումների և կարգադրությունների համաձայն։

Իսլամի սրբազան օրենքը, որը հրատարակված էր որպես անխախտ աստվածային գիրք, գլխահարկի մասին ասում է հետևյալը. «Եթե ռայան (հպատակ քրիստոնյան—Ե. Ս.) հրաժարվում է մուսուլման դառնալուց. ապա նա կարող է ընտրել երկուսից մեկը՝ մահ կամ փրկանք վճարել։ Եթե նա յուրաքանչյուր տարի վճարում է գլխահարկ ապրելու իրավունքի համար, ապա ստացականի մեջ ասվում է, որ այդ տուրքը ներկայացնում է իրենից փրկանք տվյալ տարում իր գլուխը կրելու իրավունքի համար։

Այս տուրքը Թուրքերեն լեզվով կոչվում է ջիզիե. ջիզիե խոսքը նշանակում է փոխարեն կամ հատուցում մահից ազատվելու համար, եթե քրիստոնյան հրաժարվում է իսլամություն ընդունելուց։

Խարաջ հարկը, որ արաբերեն կոչվում է բեղելը էսկերիե, բառացի նշանակում է «զինվորության փոխարեն», վճարում էին միայն քրիստոնյաները։ Օսմանյան կայսրության մեջ հայերը, ինչպես և մյուս քրիստոնյա ժողովուրդները, որպես անհավատներ իրավունք չունեին սուլթանի բանակում ծառայել։ Զինվոր վերցնում էին միայն մահմեդականներից, իսկ ռայան—քրիստոնյան—վճարում էր հարկ։

Թուրքական օրենքով յուրաքանչյուր 135 տղամարդ տալիս էր մեկ զինվոր, ուստի 135 քրիստոնյա տղամարդ պետք է տային մեկ զինվորի արժեքը։

1856-ի օրենքով այս հարկը (զինվորական—Ս. Ե.) պետք է վճարեն միայն զենք կրելու կարողություն ունեցող անձինք, այսինքն 20-ից մինչև 40 տարեկան հասակ ունեցողները. բայց հարկահանների համար օրենք ասած բանը չկար, նոքա մինչև կաթնակեր մանուկներից զինվորական հարկ են առնում...»[2]

---

[1] «Հանդես գրականական և պատմական», 1888, գիրք Ա, էջ 226։

[2] «Փորձ», 1877—1878 թ., էջ 376։

Համաձայն 1850 թ. օրենքի, խարջի գանձման ժամանակ սուլթանական կառավարությունը գործ էր ունենում ոչ առանձին հարկատուի հետ, այլ ամբողջ գյուղի։

XIX դարի երկրորդ կեսերին խարաջի հարկման ծանրությունը էլ ավելի ուժեղացավ հայկական բնակչության նկատմամբ։ Դա կապված էր օտար փոխառությունների և Ռուսաստանի հետ մղված պատերազմների հետ (1853—56 և 1877—1878 թ. թ.)։

Թուրքական կառավարությունը յուրաքանչյուր տարի երկու միլիոն հայերից գանձում էր 9 միլիոն ռուբլուց ոչ պակաս։ Խարաջը այնքան ծանր և սոսկալի տուրք էր հայերի համար, որ երիտասարդ Թուրքերի 1908—1909 թ. թ. ռեալուցիայի ժամանակ հայերին իրենց կողմը գրավելու համար, խոստացան վերացնել այն։ Բայց, երբ նրանք անցան իշխանության գլուխը, իսկույն մոռացան իրենց խոստումները և էլ ավելի մեծացրին խարաջի չափերը։

Երրորդ հարկը, ըստ իր ծանրության բնամթերքային կամ «աշարը» կոչվող հարկն էր։ «Աշարը», ինչպես և մյուս հարկերը, Թուրքահայաստանում գանձվում էր մյուսելիմի սիստեմով։ XIX դարի երկրորդ կեսերին «աշարը» կազմում էր գյուղատնտեսության արտադրության 1/10 մասը։

Այս հարկի գանձման հետ կապված դեպքերը ավելի ծանր ու դաժան էին, քան տուրքի սահմանված չափերը։ Հարկահավաքը մուլթեզիմը չափում վերցնում էր իր բաժինը ոչ թե սահմանված չափով, այլ այնքան, որքան իր քեֆն էր ուզում, հաճախ նույնիսկ կրկնակի չափով։ Մուլթեզիմի դեմ բողոքելը անհնարին էր, իսկ եթե բողոքում էին, արդյունքը լինում էր ավելի վատ։ Դեպ բողոքը անհետևանք էր մնում, երկրորդ գայլացած մուլթեզիմը այնպիսի միջոցների էր դիմում, որ նոր աստիճանները գերազանցում էին առաջին մի չափով։

Սրանք էին այն երեք հարկերը գլխին, խառաջ և աշար, որոնք գանձվում էին հայ բնակչությունից։

Բացի այս երեք հարկերից, հայ բնակչության վրա ծանրացել էին մի շարք ուրիշ հարկեր, որոնց քանակը հասնում էր քսանի։ Այդ հարկերը Թուրքական 1908 թ. հեղափոխությամբ կոչվում էին սահ-ատակաս։

Պետական հարկերի խմբից հիշենք թաֆու հարկը։ Թաֆու հոգային հարկը, կամ ավելի ճիշտ հոգային մաքսը վճարվում էր միայն մեկ անգամ անշարժ գույքը մեկ տիրոջից մյուսին անցնելու դեպքում։ Թուրքահայաստանում հոգային հարկը մոգովբրի մեջ հայտնի էր «ինտարհալս» անվան տակ (տասնամյակի մաքսը։ Հայերի քրիստոնյայի մահից հետո գայմակամի (հանդակալեր) վարչությունն են կանչվում մահացածի իրենց մահացածությունը մեկնելու համար։ Նախ և առաջ մահացածի պատանդները անշարժ գույքի՝ մարդկանցից, խուտարքի, ջրատպի, ձեռքի գալիքածագիրը գալիքածագիրը գնահատվում էր իր արժեքից շատ բարձր, որպեսզի ավելացվեր «ինտարհալը» չափը։ Նոսա արենքի ինտարհալը գանձվում էր հարյուր արժեքության 10—15 տոկոսի չափով։ Բայց որովհետև գալիքածքի արժեքը նրա նորմալ արժեքից շատ բարձր էր գնահատվում, ուստի «ինտարհալը» սովորաբար կազմում էր գալիքածքի արժեքության 30—40 տոկոս։ Եթե մահացածները փոգ չէին ունենում «ինտարհալը» վճարելու համար,

նրանց կալվածքը համարվում էր անժառանգ «մալուլ» և վաճառվում էր աճուրդով հոգուտ գանձարանի։ Այդ ճանապարհով Օսմանյան կառավարությունը զրկում էր օրինական ժառանգներին հողից և աղքատների թիվը Թուրքահայաստանում տարեց տարի ավելանում էր։

Հայերի զրկումը հողից և տնից, ընդհանուր բնույթ է ընդունում մանավանդ 1877—1878 թվականների ռուս-թուրքական պատերազմից հետո, երբ պատերազմի ընթացքում հայերից շատերը անցել էին ռուսների կողմը։ Երբ խաղաղության պայմանագրի համաձայն հայերը վերադառնում են իրենց հարազատ օջախը, թուրքական կառավարությունը օգտագործելով «ինտիհալը»—կալվածագրերը, զրկում է հայերին իրենց բոլոր ունեցվածքից՝ հողից, տնից, անասունից, որովհետև պատերազմական գործողությունների և թափառական կյանքի ընթացքում, հայերը կորցրել էին իրենց ունեցած փաստաթղթերը։ Դա իհարկե, պատահական երևույթ չէր, այլ թուրքական կառավարության մտածված և սիստեմատիկորեն անցկացված քաղաքականության մի մասը։

Այսպիսով Օսմանյան կառավարությունն իր ագրարային քաղաքականությամբ՝ հայկական հողերի մասսայական բռնագրավումների և հարկային սիստեմի չտեսնված ճնշման միջոցով, ձգտում էր Թուրքահայաստանի տնտեսական քայքայմանը, որը նպաստում էր Թուրքահայաստանը հայերից մաքրելու քաղաքական ծրագրի իրագործմանը։